ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 208 - Ա **04 մարտի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 249-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի>> 15-րդ կետի պահանջը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի հունիսի 18-ի <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի N4 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2007 թվականի ապրիլի 2-ի N37/3-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N249-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

   1)<<Մաթևոսյան Նորիկ/վերադասի ներկայացուցիչ՝ համաձայնությամբ/>> բառերից հետո լրացնել <<երեք տարի ժամկետով>> բառերով.

   2)<<Գևորգյան Լենա/վերադասի ներկայացուցիչ՝ համաձայնությամբ/>> բառերը փոխարինել <<Ղուկասյան Ալվարդ Աղասու/վերադասի ներկայացուցիչ՝ համաձայնությամբ/-երեք տարի ժամկետով>> բառերով.

   3) <<Ղուկասյան Արմենուհի/ՏԻՄ ներկայացուցիչ/>> բառերից հետո լրացնել <<երեք տարի ժամկետով>> բառերով.

   4)<<Սեդրակյան Սվետլանա/ՀՀ ԿԳՆ ներկայացուցիչ/>> բառերը փոխարինել <<Սարգսյան Իշխան Սերյոժայի/ՀՀ ԿԳՆ ներկայացուցիչ/-երեք տարի ժամկետով>> բառերով.

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ